


նակ այլ իսկատիպ հանգերէք : Խալթոյ դե-  
ղեցիկը՝ ինչպէս փրփրող կծու գինին , կամ  
շարահնճի փողբիկ աղջկան մը քրքիչը , և վեր-  
ջապէս ծաղրելւոյն սահմանին հասած ծիւ-  
ծաղաշարժ երեւոյթը որ իրենց սեփական  
մասնաւոր համ մ' ունին մանաւանդ կանանց ,  
տղոց , ռամկին և վալերենեաց վրայ՝ իրենց բնդ-  
արմացեալ անդամները հնչուութեամբ ձգտե-  
լով կամ խողտանօք զանոնք կծկելով , ինչ-  
պէս մարդկային դէմքի անհնթեթ ձեւերը  
շուքի տակ . կապկի ծամածռութիւնները կամ  
թզուկ կուզ հոսկիտի մը կատակներ , և այլ  
այսպիսի բիւր տեսակը ջղային ձկտմանց և  
խողտմանց ու ցաւոց զգացման խառն հանդիս  
որ իրենց նորութեամբ կամ անակնկալ մեծ  
հանգամանքով մասնաւոր հնչուութիւն մը կը  
պատճառեն մեզ :

Շարայարեյի

Թ. ԹԵՐԶԵԱՆ



## ՍՈՒՐԷԱՆԳԱԿ ԲԱԶՄԱՎԻՊԻ

ՆՈՐ ՀԱՐՏՄՈՒՆԷՐ

Է. ՄԱՍԻ ԲԱՇԽՈՒՄՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՄԵՋ

Հետաքրքիր եմ իմամալ ձեր Սոսրճանդակի  
միջոցաւ . ոչ կաթողիկէ Հայ եկեղեցեաց մէջ . ս .  
Պատարագի վերջաւորութեամ ժամանակ ժողո-  
վըդի բաժնուած Մաւը լիմ ժամանակութիւն ունի .  
Ո՞ր ժամանակէ մուտ գտած է Հայ եկեղեցւոյ  
մէջ Մաւի բաշխումը :

Միթէ՞ ուրիշ քրիստոնեայ եկեղեցիք ունէին  
այս սովորութիւնը :

Եթէ՞ Հայկական եկեղեցւոյ արարողութեամ  
կը պատկանի լիմու զի գործադրուիր Հայ կա-  
թողիկէ եկեղեցեաց մէջ :

Կ. Ա.



## Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ՆՈՐԱԳԻԻՏ

ԱՆԹԵԼ ՀԵՌԱԳԻՐ

(Շար . տնս էջ 302)

2

Արդեօք Մարկոսիի հետագիրները կրնա՞ն  
ծուլելու ու լեռներէ անցնիլ :

Ոմանք կ'առարկեն . խղիւղը քանի որ հար-  
թածաւալ գետնի վրայ կամ տափարակ ծու-  
լու երեսը գետեղուած երկու կայարաններու  
միջեւ հեռագիր յրկելու վրայ է՝ կը հասկը-  
ցուի զիրաւ որ Մարկոսիի հեռագիրն յաջող  
եւք պիտի ունենայ . բայց եթէ այդ երկու  
կայարաններու մէջտեղը գտնուին շէնքեր ,  
բլուրներ , լեռանց շղթաներ , և այլն , ինչ-  
պէս կարելի է որ եթերային ալիքներն ա-  
նոնց զարնուելով՝ չընդհատուին կամ անոնց  
մէ անցնին :

Իրաւ է հանուած զծուարութիւնը . և սա-  
կայն փորձը կը ցուցնէ որ բաւական յա-  
ջողութեամբ կ'անցնին , և փորձոյն տուած  
պատասխանն այս առարկութեան դէմ կարող  
է և միանգամայն համոզիչ . Հոլովայ մէջ  
շատ մը պատերու , ծածքերու , կամարներու ,  
առաստաղներու , և այլն , միջէն անցնելով՝  
զրկող կայարանին նշանները միշտ բնոր-  
նութեան ստացող կայարանէն : Սպեցիայի  
մէջ՝ ընդ մէջ ցամաքի և նաւու՝ կարելի ե-  
ղաւ միշտ հեռագրել և հեռագիրն ընդունիլ ,  
չնայելով որ ընդունող կամ ուղարկող զոր-  
ծիքներն նաւուն ամենախոր շտեմարանաց  
մէջ անգամ գետեղեցեան , և նաւուն ու  
ցամաքին մէջ տեղը գտնուած տարածութեան  
վրայ կային կղզիներ և հրուանդաններ :

Վերը ըսի՝ բաւական յաջողութեամբ . »

րովհետեւ փորձերը ցոյց տուին որ ինչ ինչ պարագայից մէջ բնական արգելքները կրնան բողբոլիկն խափանել հաղորդակցութիւնը, գեր երթոր գործիքները շատ մօտ գտնուին այդ արգելքներուն և Սլայպէն՝ օրինակ իմն հանդիպեցաւ փորձի մ'ատեն, յորում երկու կայարանաց գործիքները իրարմէ հեռու էին 7000 մետրէն աւելի, և մէջ տեղերնին՝ 3000 մետր ընդունող գործիքէն հեռու՝ կը գտնուէր 100—150 մետր բարձրութեամբ բլուր մը և Մինչդեռ երբ գործիքներէն մէկը մինչեւ նաւուն ստորին խորը լիւցին, այս օրինքն՝ ջրոյ մակերեսութէն քանի մը մետր խոր, այնքան արգելքի չհանդիպեցան, և նշաններն ընդունուեցան կամ կասարեալ կերպով և կամ՝ զէթ բաւական պայծառ և որոշ՝ կարգացուելու չափ. այնու հանգիւծ որ մէջտեղը փոքր արգելք չէին նաւուն կողքերը, զբարձր, պատերազմական կարգմուծները, մեքենաները և քանի մը մետր հաստութեամբ ջրոյ թանձրութիւնը:

Պէտք է գիտնալ որ արեգերական եթերը կը թափանցէ կը տարածուի ամէն մարմնոց մէջ, որոնք՝ նոյն իսկ ամենէն աւելի խտագոյնները՝ կրնան նմանցուիլ, կերպով մ'ըսեմ, սպունգի մը լայն խորշերուն՝ եթերին նրբութեան հետ համեմատելով, ուստի զարմանալու բան չկայ՝ երբ շատ մը դիպուածներու մէջ կրնայ անոնցմէն անցնիլ և Արդ, ինչպէս որ լուսոյ նկատմամբ քափանցիկ (բիւրեղ, ջուր, օդ, և այլն) և անքափանց մարմիններ կան, այսպէս նաեւ ելեկտրական ալեաց համար ալ թափանցիկ և անթափանցելի մարմիններ կան. զոր օրինակ, թափանցիկ են՝ ապակին, քարը, հողը, և այլն, իսկ անթափանցիկ են ջուրը և մետաղները (նոյն իսկ ամենաքարակ թիթեղի վերածուած): Ընդհանրապէս խօսելով, այն մարմինները որ վառ հաղորդիչ են ելեկտրականութեան՝ թափանցիկ են իրեն ալիքներուն, մինչդեռ լաւ հաղորդիչներն՝ անթափանցելի են ելեկտրական ճառագայթներէն: — Բայց պէտք է ըսեմ՝ նաեւ որ թափանցկութիւն և անթափանցկութիւն ըսուածն երբեք բացարձակ երեւոյթներ չեն. այս ըսածս լուսոյ ճառագայթներէն կրնամ ցոյց տալ. զոր օրինակ,

նակ, ոսկին կը համարուի ամենէն աւելի անթափանցիկ մարմիններէն մին, բայց աւանաբարակ թերթերու վերածուելով (ինչպէս կը գործածուի ոսկեզօծութեան արուեստի մէջ) թափանցիկ կը լինի լուսոյ կանանչ ճառագայթներէն. իսկ ջուրը, որ ամենէն աւելի թափանցիկ մարմիններէն մէկն է՝ զուտ եղած տեսն, քանի մը մետր խորութեան մէջ բնաւ արեւու ճառագայթ մը չի թողուր անցնելու, և այս պատճառաւ ծովերու յատուկը ամենախիստ մթութիւն կը տրիւ: — Բայց մի և նոյն ժամանակ մենք կը տեսնենք որ մարմնոց խտութեամբ կամ անկատար թափանցկութեամբ հանգիւծ՝ լոյսը իւր անհամար ծածանմամբ և բերեկմամբ՝ մոտամբ մի կը մտնէ կը թափանցէ նաեւ այնտեղ՝ ուր որ ուղղակի մուտք չի կրնար գտնել:

Լուսեղէն ճառագայթից նկատմամբ ունեցած մարմնոց այս թափանցկութեան և անթափանցկութեան խաղերն ու յատկութիւնները՝ կրնան ծառայել մեզի բացատրելու նաեւ ելեկտրական ալեաց աւելի կամ նուազ գտած արգելքներուն խնդիրը: Մինչեւ այսօր եղած ուսումն և դիտողութիւնը այս իրաց վրայօք այնքան քիչ են դեռ, որ ճիշդ սահման չենք կարող որոշել այն գծաւորութեանց՝ որք կրնան հանդիպիլ Մարկոնիի հեռագրական նշաններն ի կայարանէ կայարան հաղորդուելուն մէջ:

Այս նիւթի միայ վերջին կարեւոր դիտողութիւն մ'ալ ընեմ: Քիչ առաջ յիշատակեցի նորարդիւր տաւերով՝ որ Սլայքիայի մէջ եղած փորձերուն ատեն՝ հեռագրական գործիքներուն շատ մօտ գտնուած արգելքները՝ բողբոլիկն անթափանցիկ կը մնան և լեկտրական ճառագայթներէն և լրատու հասկընալու և շատ մեծ թանձրութիւն ունեցող արգելից համար, վասն զի այն ընդարձակ թանձրութեան մէջ թափանցած ճառագայթները մինչեւ չափ մի անցնելէ վերջը կրնան նուաղիլ և կամ բոլորովին խափանուիլ թանձրութեան մնացած հաստութենէն և Հետեւաբար՝ այսպիսի արգելքներու յաղթելու նկատմամբ՝ ամենակարեւոր և Մարկոնիի հեռագրատան մի ունենալիք դիւրը, որ պէտք է յարմարագոյն լինի և Այս երեւոյթի նմանը կը հանդիպի մեզի ալ՝ լուսեղէն ճառագայթ

թից նկատմամբ, երբ լուսարգելը բոցոյն մօտեցընելով՝ օնենկի մը մէջ սարածուած ճառագայթները կը խափանենք, որով կը մթննայ. իսկ երբ հեռացընենք լուսարգելը՝ ճառագայթները անուղղակի կերպով կը լուսաւորեն նաեւ լուսարգելէն անխափանցիկ մնացած մասը :

## Է

Արդեօք վտանգ կայ որ Մարկոնիի հեռագիրները գողացուին օդէն մէջէն՝ իրենց ընթացքին ժամանակ :

Եղան ոմանք որ ըսին թէ գծուարութիւն չկայ որ Մարկոնիի հեռագիրները կարենան գողացուիլ այն անձերէն՝ որ ուզեն ընդունուելու համար սահմանուած գործընթին նման գործընթ մը հաստատել, որոյ միւսն ալ հաստատապէս ազդեցութիւն պիտի ընեն ուղարկող կայարանէն հասած էլեկտրական կամ էթերային ալիքները : — Այս գիտողութիւնս իրեն սկզբունք՝ ուղիղ է եւ ճշմարիտ. բայց այս պարագայէն յառաջ եկած անպատեհութեան դարմանը կայ. վասն զի Հէրցեան ալիքներն ալ՝ նման ձայնական ալիքներու՝ իրենց անփական յատկութիւն մ'ունին : Եթէ բաց դաշնամուրի մօտ՝ ձայնորդ մը (*diapason*) թրթռացընենք՝ որ որոշեալ աստիճան մի ձայնի յառաջ բերէ, կը տեսնենք կամ կը լսենք որ մի եւ նոյն ժամանակ կը թրթռան միայն իրեն համաձայն եղող լարերը, իսկ միւսները լուռ կը մնան. նոյնը կը հանդիպի նաեւ էլեկտրական ալիքաց նկատմամբ : Եթէ ուղարկող գործընթ մը կարող է որոշեալ չափով երկայնութեան եւ յաճախութեան էթերային թրթռումներ կամ ճօնմունք յառաջ բերել, ընդունող գործընթն ալ պէտք է որ նոյն չափ ալիքներ ընդունելու համար պատրաստուած լինի, ապա թէ ոչ չի շարժիր եւ չի պատասխաներ ուղարկող գործընթին շարժմանց եւ կամ անհամաձայն կը պատասխանէ : Փորձելով այս կարելու իրողութիւնս հաստատուած է, որ հարկ է ուղարկող եւ ընդունող գործընթներն իրարու հետ համաձայնեցուին, որպէս զի կարենան հեռագիր

մ'ուղարկել եւ ընդունիլ : — Այս համաձայնութիւնս զփութարն բան մի չէ, հետեւաբար զիւրազորածելի միջոց մ'է պաղտնիքը պահպանելու համար. առանց հարկ լինելու զաղտնի նշաններու կամ պղտուքնի դիմելու, քանի որ համաձայնութեան աստիճանը անսահման կերպով կրնան իրարմէ տարբերիլ :

Շարայարելի

## Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Ա Մ Ի Ս

Թ Ո Ի Ն Ի Ս



## ՄԻԱՑԵԱՒ, ՆԱՀԱՆԳԻ ԵՒ ՍՊԱՆԻԱ

ՊԱՅՏԵՐԱՅՄԸ կը շարունակուի երկուց աղագոյ մէջ, եւ բովանդակ Եւրոպայ մտնողներէ ի վեր հանդիսատես կեցած է առանց հաշտարար միջնորդութեան մը անտարբեր, անհոգ եւ զրեթէ անզգայ քաղաքականութեամբ, զոր կ'սուղէ չեզոքութեան բառին ներքեւ քօղարկել :

Ամերիկայէ եկած լուրերը իրենց անեղջուրութեան համար Պատմութեան մէջ առանձին ժառանգակ մը պիտի կազմեն, ի որ զարմանալին է, այլ չլինծու լուրերը երբեմն նպատաստութեան կ'երեւան Սպանիոյ, որով կապուած մը կը ծնանի որ ամենայնը դրամական խաղ մը ըլլայ, եւ թէ կարելի է ըսել, նոյն իսկ պատերազմը, որ այսօր արեւելեանութեանց պատճառ է, դրամական խաղ մ'է :

Մանիլա քաղաքը, ըստ հեռագրաց, շատ անգամ անուանեցաւ եւ կամ անձնատուար եղաւ եւ սակայն տակաւին Սպանիացաց ձեռքն է եղաւ : Բայի ծովեղերայ բերելը շատոնց հիմնադատակ կործանուեցան եւ Սանտիագոյ աներակի կոյս մը դարձաւ, եւ սակայն Զերվերա փակուած Արա նաւահանգիստն մէջ կը լուսաբեցնէ : Ամերիկացի վիթխարի նաւատորմի մը եւ կը յամեցնէ պատերազմին վախճանը, միշտ յուսով որ ծագէ յանկարծ յաւընութեան կամ